

ADMINISTRATION

Place des Canons, 9, Rue d'Italie

BEYROUTH «Liban»

DIRECTEUR-PROPRIÉTAIRE

J. ADJEMIAN

ԼԻԲԱՆԱՆ

Ազգային - Քաղաքական Գրական
ԱՆԿԱՍ ՀԱՅԱԹԵՐԹ

Է. ՏԱՐԻ Թիւ—581

ՉՈՐԵՔԺԱՐԹԻ 5 ՕԳՈՍՏՈՍ 1931

ՀԱՏԸ 3 Ս. Գ.

Բ. Ա. Ժ. Ն. Ե. Գ. Ի. Ն.

ՍՈՒՐԻՒՆ— 846, Վեցամս, Եռամս-

350 175 125

ԱՐՏԱՍՈՂԱՄԱՆ 6 4 2 ՏՊԱՐ

Խմբ. Մ. ԱՂԱԶԱՐՅԱՆ

ՄԵՐ ԽՍՈՒՐԸ

Մ Ի Ն Չ Ե Ի Ե Ր Բ

Հայութեան, մասնաւորաբար Սուրիահայութեան մէջ, ներկայիս երեք հատ քար գայթակղութեաններ կան: Մայիս 28-ը, եռագոյնը եւ «Մեր Հայրենիք»:

Ասոնց է առաջինը՝ կարճ եղանակ մը ունի, տարին ամիս մը երկուք միայն կը յուզուի: Եւ 24 ժամէն իր բաղդը կը գտնէ:

Երկրորդը՝ պաշտօնական օրերու յատուկ է. մարդ կրնայ գիտնալ այդ փոթորիկու օրերը և տունէն դուրս չ'ելլել:

Բայց երրորդը՝ ամենօրեայ է. չես գիտեր թէ ե՞րբ և ո՞ր կողմէն գըլ-խուզ պիտի գայ: Ահա՛, թէ ինչու այս վերջինը թէ և ամենէն անմեղը՝ եւ սակայն ամենէն վտանգաւորն է:

Լսեցեք թէ ինչպէս:

Պիքֆաեա գիւղը, Պէյրութէն 50 քիլոմէթր հեռու հովոց մըն է. հոն 40-50 հայ ընտանիքներ, քաշուած ամէն աղմուկէ, ինկած են իրենց չոր հացի ետեւէն: Բոլորն ալ աղքատ, բոլորն ալ գործաւոր, բոլորն ալ կոյս՝ սրտով և հոգեւով:

Ասկէ երեք տարի առաջ, հայու կրթասէր ոգին կը մղէ զանոնք ալ, որ ունենան իրենց գիւղական ազգային վարժարանը և ձեռով մը կ'ստեղծեն զայն: Բարեգործականը տարեկան 18 եգիպ. ոսկի նպաստ կը վճարէ, մնացածն ալ իրենք կը հոգան զանազան միջոցներով: Այդ միջոցներէն մին ալ զարոյցին տարեկան հանգէտն է, որ կը կատարուի Օգոստոսի սկիզբները օգոստեան համար գիւղական հայերու նուէրներէն:

Այս տարի, քանի մը ամիս առաջէն, թաղականութիւնը ներկայանալի հանգէտի մը նախապատրաստութեան կ'սկսի, ընդարձակ սրահ մը կը գտնէ, բաւական մեծ ծախքեր կ'ընէ և յայտագրին մէջ, «Մեր Հայրենիք»-ը ուրիշ երգերու չափ յարգելի գտնելով հանդերձ, անկատ կը թողու՝ պարզապէս վերջերս անոր շուրջ ստեղծուած վիճաբանութիւններէ և աղմուկներէ խուսափելու համար:

Դիւզին ուսուցիչը, չէղոքի մօրթին տակ պահուած սմաղուկ գաշ-նակցական մը, կուսակցական ընդհանուր հրահանգումի համաձայն, իրու-ղութիւնը կը գործունէ Պէյրութի գաշակ կոմիտէին, որը անմիջական զօ-բեգի տալու համար «Մեր Հայրենիք»:

Շաբաթ օրը, «մարտականներ» կը հասնին Պիքֆաեա, Պէյրութէն տարուած փողով կը զուարճանան մինչև լոյս և կ'իրակի օրը—2 Օգոստոս—որոշեալ ժամուն, դիրք կը բռնեն հանդիսատարի առաջին շարքին վրայ:

Հանգէտը կը բացուի «Բամբ Որոսան»ով, կը նախագահէ Պէյրութէն մասնաւորաբար հրաւիրուած Տ. Թորոս քահանայ, փոքրիկներ կընեն երեք արտասանութիւններ և յանդերձ յայտագրէն բոլորովին դուրս, անհանգ-կալի վարժապետը կ'սկսի երգել «Մեր Հայրենիք»-ը: Բայց «բեռառ ան-սէր» չհասած՝ ժողովուրդը բուռն զայրոյթով ոտքի կ'ելլէ և կը լռեցնէ եր-ցած հոգի ուսուցիչը, որ փոքրիկներու լռելէն վերջն ալ կը շարունակէ եր-գել: Իսկ մարտականները... Ե՛, անոնք առաջին անգամ իր իր պատրաստ օթոններ նստելով կը փախչին... «հերոսներ»ի պէս:

Ցաւալին այն է սակայն, որ հանգէտ խանգարուած ու ցրուած է և օտարները ամենածանր մեղադրանքներով խօսած են հայութեան հանդէպ:

Մեզի համար անկարեւոր պիտի ըլլար խօսիլ ժողովրդական բուռն զայրոյթով արգելուած «Մեր Հայրենիք»ի և նապաստակի պէս փախցուած գաշակ մարտիկներու մասին: Եթէ աղքատ գիւղացին իր զարոյցական հա-տոյթէն՝ իսկ թափառական հայութիւնը պատուէն եղած չ'ըլլար:

Եւ այս բանը կրնայ պատահիլ ամէն օր, ամէն ժամ՝ ուր որ հաւա-քոյթ մը կամ հանդիսակատարութիւն մը ըլլայ: Եւ այս դրութիւնը, կըր-նայ մեզ պատահուի ո՛չ թէ միայն Նիւթական ու բարոյական վիճակներ՝ այլ և զուգէ անդարձանելի կորուստներ: Դրութիւնը կարծուածէն աւելի մը-տահողիչ կը գտնենք, պարզ անոր համար որ գաշակներէն իր ծնրած երգին պատճառած շղագրութիւնը տեսնելով հրճուանք կ'զգայ ու զայն ի հիմունքս երգել կուտայ՝ պարզապէս արեւան նախանձով: Եթէ դրութիւնը պիտի շարունակուի՝ այժմէն ըսինք թէ պատասխանատուութիւնը կիցնայ զոյգ Գաթրիկոսեաններն եւ ազգային կոչուող վարչութեանց վրայ:

Իրաւ է թէ ամէն մարդ, ամէն միութիւն, ամէն կազմակերպու-թիւն ազատ է իր ուզած երգը երգելու կամ չ'երգելու: Բայց այդ բոլորը իրենց տանը մէջ, իրենց շրջանակէն ներս, իրենց ընկերներուն հետ, իրենց նախախորհութիւններուն համաձայն՝ և ո՛չ թէ ազգի տունէն ներս, ազգա-յին շրջանակներու մէջ, ազգի գաղափարներուն հետ, ազգային վարչութիւն-ներու կամքին հակառակ՝ բռնի ուժով, հոգով ու սարսափով, զօրսային սաղարաններով:

Եթէ անխիստականութիւն չ'է՝ որ կը տրեք, եթէ թայֆայականու-թիւնը չ'է՝ որ պիտի քաշուենք, եթէ ազգային հեղինակութիւնն է որ պի-տի ստեղծենք, եթէ որպէս ազգ և համայնք է, որ պիտի ներկայանանք պէտք է որ ազգայինը գտնենք՝ կուսակցականէն, համայնքը բաժ-նենք բարեխաղանէն և գիտանք թէ ո՛վ է անոնց գլուխը, որոնք են վարչիւնը և ուրիշ՝ է որ կը բղխի ազգային հեղինակութիւնը՝ անկից մի-այն ընթացք և ուղղութիւն առնելու համար: Այլապէս անտանելի է դրու-թիւնը օրէն կատուած թաղականին, առաջնորդին, հոգաբարձուին՝ որոնք մշտապէս կազմուցին ամէն կողմերէ:

Տա՛մը տարի է որ կը տեսնէ այս դրութիւնը: Ամէ՛մ տարի Մայիս 28ի խոհրդ, ամէն ամիս եռագոյնի աղմուկ, ամէն օր, ամէն ժամ «Մեր Հա-յրենիք»ի կոչի՝ ազգային հաստատութիւններէ ներս: Ո՛վ է որ ուրեմն պի-տի հետաքրքրուի այս խնդրով, ինչո՞վ է որ մէջ զոյգ Գաթրիկոսեաններ ի-րենց անձը անպարտ պիտի գտնեն տխուր պատահականութեանց առաջ: Ե-թէ անցեալը անցածով փակենք ներկան ո՛չ մէկ բանով կարելի է փրկել՝ քանի որ խնդրները հրատապ վիճակ են ստացած և զանոնք ո՛չ մէկ բա-նով կարելի է մեղմել կամ ամբիշ: Եթէ ոչ վճռականութեամբ:

Կ'սպասենք:

ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ՎԵՐՔԵՐԵՆ

Մ Ե Ր Ո Ր Բ Ե Ր Ը

Նգիպտոսը այս զաղութներէն մին է, որ իր մէջ ընդունած է բազ-մաթիւ որբեր, որոնք ասկից 5-6 տարեկի տառալ, Ամերիկեան Նիւ Իոթ Բըլիթի միջոցաւ Յունաստանէ բեր-ուած են:

Նգերաբաղդ հայութեան այս ան-ժառանգ, զօրազգ բեկորներուն ըլ-լա՛յ Յունաստանի, ըլլա՛յ հոս, Ե-գիպտոսի մէջ աւելցած կենսաբան, ենթակուած դատարաններու մասին չենք ուզիր արտայայտուիլ, քանզի այդ մեր այս օրուան թղթակցու-թեան նիւթին հետ ուղղակի կապ և առնչութիւն չունի: Սակայն տեղին է կարծենք յիշել թէ՛ հայ որբին—անձնուած հայուն ապագայ յոյսի ծիրերուն—ամենէն յարմար, վերջ-նական հանգրուանը և միակ ապա-ւենը, ո՛չ թէ Նգիպտոս, Յունաստ, Յունաստան կամ Սուրիա էր, այլ հայ մայր զանգուածին գիրը, մայր հայ-րենիքն էր. ան միայն հայրական հոգածութիւն, մայրական գորով եւ գուրգուրանք կրնար ցոյց տալ իր բաղդազուրկ և բնաւէր ձագուկնե-րուն: Յաւալի է որ մեր իշխանա-ւորները, ազգ. իշխանութիւնները իր ատենին չ'զրկային թափանցիլ մօր բարերար Ամերիկացոց հակահայաս-տանական ապագայ ձագուկնե-րէն: Երբ որբերը, չորս հոգեւորու-ցանելու ամերիկեան մօթին հետ հաշտ և համակամ մնացին:

Յաճախ թերթերու մէջ կը հան-դիպենք մօր որբերու կեանքէն վեր-ցուած աղետալ նկարագրութիւն-ներու, սահմակցեցող լուրերու, ո-րոնք զգայուն սիրտներու մէջ փո-թորիկ կը յարուցանեն, և անէծք կը զննեն մեր շրթունքներուն մէջ ա-նոնց հանգէպ, որոնք ո՛չ թէ շար-գեցին, այլ շարգարարներու ձեռ-քէն ազատելով՝ անկուշտ կապիտալ—Մոզսթիւն կապի Նետեցին մեր Նոր Սիբուրդը, որպէս շահագործումի ի-րեր, որպէս անտէր անտիրական գե-րերներ—ճորտեր:

Թղթատեցէք Յունաստանի մա-տուլ, հոն տխուր գոյներով նկա-րագրուած պիտի գտնէք, անգամ, հայու արեւն ծծող հայտնուն յանձ-նակատարներու միջոցաւ փայլուն հեռանկարներով, շողողուն խոս-տումներով Յունաստանէն՝ Յունաս-տան փոխադրուած հայ որբերուն կեան-քին ամենատխուր գրուագիները:

Օտարները, նոյնիսկ ամենատ-ղորմած, զթախիտ Ամերիկացին, մեր ցիւղին զոգգոթթային լուռ հան-դիսատես ըլլալէ վերջը, գուրգուրոտ սամարացիի մը կիրպարանքով մօ-տեցաւ մեզի և մեր անձնուած ցե-ղին խեղճները անապատներէն հա-ւաքելով որբանոցներու մէջ խնայ-ցին և մեծցուցին: Խղճի և մարդա-սիրութեան պարտք մըն էր որ կա-տարուեցաւ մեր որբերուն և այրի-ներուն հանդէպ և հայ ազգը համօ-րէն երախտապարտ կը մնայ Ամերի-կեան աղիւի ժողովուրդին ընծեւած նիւթական օգնութեանց և գոհողու-թիւններուն համար: Սակայն մենք երախտապարտ ըլլալով մէկտեղ եր-բէ՛ք թոյլ չենք կրնար տալ որ մեզի բարերար Ամերիկայի ներկայացու-ցիչները—նիւթի գերի դաժնած մար-դիկ, օժանդակութեամբ և գործակ-ցութեամբ ընչաքաղձ հայտնուն ա-պատանհարու—հայ ազգին երիտա-մարդութիւնը աշխատեցնու շնք եւ աշխատանք ունենան: Մենք չպէ՛տք է թուալարենք որ թուրքին եթա-զանէն հրաշքով ճակատաբար որբա-ւանդները:

Թիւնը՝ սպիտակ ջարդի, անարիւն կոտորածի զոհ դառնալ՝ միանգամ ընդմիշտ ուժանալով հայութենէն:

Այս վերի խորհրդածութիւնը ը-նելու մղուեցանք երբ աչքի առաջ բերինք Դահիլի հայ որբերուն ա-միսներէ ի վեր մղած լուռ և հան-գուրտող պայքարը ընդդէմ՝ նախկին ՊՅՍՄ ՀՕՄԻ և այժմու Ամերիկեան ՖԱՌՆՏԵՑՆԻ վարիչ Մր. Տէյվըտ-սընի:

Իսկին մը բացատրութիւններ: Դժբաղդ օր մը, ասկից 5-6 տարեկի տառալ, Յունաստանէն Ե-գիպտոս որբեր փոխադրելու որո-շումը տալով, Նգիպտոսական բարեխը-նամ կառավարութեան հաւանու-թեան և հանութեան ենթակցեց Ա-մերիկեան Բըլիթը և Ազգ. Առաջ-նորդարանն ալ ուրախութեամբ հա-մակամ և համակարծիք գտնուեցաւ այս փափաքին և որոշման:

Ուստի կարճ ժամանակի մը մէջ 500-է աւելի երկեսու որբեր բերուե-ցան Նգիպտոս՝ ժամանակ մը որբա-նոցի մէջ մնալէ վերջը՝ տարեքառ որբեր արհեստի, իսկ որբուհիներն ալ հայ, յոյն, հրեայ եւրոպացի ընտա-նիքներու մօտ ծառայութեան որբ-նոցանոցները, այսպիսով Boys Home-ի բնակիչներուն թիւը նուա-րեցաւ և հաշուարարի ենթակը-ւեցաւ որբանոցը:

Ինքնապահ կարծուած որբերուն ամենամեծին մէկ տոկոսը ինքնաքա-ւէր: Պատեցաւ ճնշող մեծամասնու-թիւնը հազիւ հազ չորս հազ մը կըր-նան ճարել, ան ալ ամենալավագոյն-մաններու տոկոսով, Բազմաթիւ են այն որբերը որոնք ապրուստ մը ճարելու անմիջական մտահոգու-թեամբ իրենց ամենաթանկագին ժա-մանակները գործարաններու մէջ կ'անցնեն առանց արհեստ մը կարե-նալ սովորելու:

Խեղճներ նախ պիտի աղբուրն, և ապա իրենց ազգային մասին մը-տածեն, առած օրակոնիկն այնքան ճշգրիտ է որ դրամ աւելցնելով յա-ռուշիկային արհեստի մը հետեւելու հնարաւորութիւն չեն կրնար ունե-նալ:

Ասկից աւելի քան տարի ու կէս առաջ Boys Home-ը հաշուարարա-րի ենթակուելով փակեց իր դռնե-րը՝ միայն քանի մը տասնեակ ան-չափահաս որբեր կային, զանոնք ալ Ազգ. Առաջնորդարանի հսկողու-թեան և խնամքին յանձնելով արբա-նոցի անօրէնութիւնը, ՊՅՍՄ ՀՕՄ-ի գոնիւր վերջնականապէս փակեց:

Եւ որպէսզի Ամերիկեան մար-դասիրական հոգածութիւնը վայե-րողները միշտ կապուած մնան Նոր Աշխարհի բարեբաւներուն կամ աւե-լի ճիշտը որբանոցները վարողներ իրենց լեցուն ամսաշաններէն չի զրկուիլ, ՊՅՍՄ ՀՕՄ-ի փոխարինե-ցին Որբերու Ակումբ—ճաշարանով զոր վերջէն ԱՄՆԻԿԵԱՆ, ՖԱՌՆՏԵ-ՑԵՑՆԻ անունով մկրտեցին:

Այս հաստատութիւնը այժմ կը կառավարուի Մր. Տէյվիտսընի կող-մէ՛ն նշանակուած քանի մը որբերով: Ամէն որբ պարտաւոր է անգամ ար-ձանագրուիլ և ամսական տուրք մը վճարել: Այն որբերը որոնք անգամ չեն և ամսավճար չեն տար, այդպի-սիները խորթ մը կը դիտուին, և եթէ երբեք օր մը ունենան ինչորոշ մը առթիւ Ար. Տէյվիտսընի օգնութեան զինքն սպիտակ, անոնցմէ՛ն չը պա-

ՕՐԸ ՕՐԻՆ

ԼԱԲԻԻՐԻԻՆԹՈՍ

Գ.

ԽԱՐԾԻԿ ԵՂԱՆԱԿ ՍԸ՝

Գիրք (նշողոց):
Եւ Ազգ. Համագումարը ծնաւ Ազգ. Սահմանադրութիւնը.
Ազգ. Սահմանադրութիւնը ծնաւ ընտրութիւնը.

Ընտրութիւնը ծնաւ զաւառա-կան ժողովը.

Գումարական ժողովը երկուցի բռնուելով պիտի ծնի՝

1.- Դաշնակցական Գաւառիկ. ժողովը.

2.- Հնչակեան Գաւառական ժողովը.

3.- Ռամկավար - Ազատական Գաւառական ժողովը.

4.- Զեղոք Գաւառական Ժո-ղովը.

5.- Coalition Գաւառական ժողովը.

6.- Առանցիկական Գաւառա-կան ժողովը.

7.- Մարաշիական Գաւառա-կան ժողովը.

8.- Անթապիկական Գաւառ-ական ժողովը.

9.- Անատոլիկ հայերու Գաւառական ժողովը.

10.- Արար-Քիւրտ հայերու Գաւառական ժողովը.

11.- Հայ մաթթոք հայերու Գաւառական ժողովը.

(Վերապէս մէկ գաւառականի մէջ ամէն հայ գիւղ և թաղ իր գա-ւառականը պիտի ունենայ):

Գաւառականը պիտի ծնի քաղա-քական ժողովը մը որ իր մօտը բա-լար յատկանշեցը պիտի ունենայ:

Քաղաքականը պիտի ծնին խո-հուրդներ:

Ուսումնական,
Տնտեսական,
Կրօնական,
Գաւառական:

Ուսումնական Խորհուրդին մէջ բացի վերի տեսակէն, պիտի կազմուին Հայկական, Լատին, Անգլո-Մոսլան, Սլաւ, Արաբ, Թուրք, Քիւրտ և Գնչու ենթախորհուրդներ:

Քաղաքականը նորէն պիտի յը-ղանայ և ծնի հոգաբարձութիւններ՝

Դպրոցներու,
Կարուածոց,
Նկարչեցոց,
Աղքատաց և

Պէտքէն յանձնաժողովներ, են-թայանձնախումբեր, զօմիթներ եւ միութիւններ:

Բոլոր այս նորածին պէպէտե-սները պիտի ունենան ամէն տեսակ դրամ, բացի զուտ գերազանցօրէն ազգայինէն:

Անշուշտ անոնք պիտի ճշան, շարժին, պրտան, կանչեն, խաղան, կուռնուին:

Խարշիկ երաժշտութիւն.

Բառս՝ որուն վրայ պիտի յաժի ոգին անոր զօր գիտէք, փնտելով պատմական ծանօթ կծիկը՝ երեւոյս համար այս լարերինթոսի մէջէն:

... Ետեւ... զի բարի է...

Ահա՛ ինչ որ կուզուի յանուն Սահմանադրութեան:

ՄԻՋԵՆՈՒՏ

Հանձնուի անգամադրութեան քա-րք: Ակնկալուած օգնութիւնը ստա-նալու համար անգամադրութեան քարթը նախապայման է: (Շար) Գաւառ

Ընտանեկան քաղաքի բներդ:

Ս Ե Ի Օ Ր Ե Ր

Կ Ե Ս Ա Ր Ի Ո Յ Ն Ա Խ Ճ Ի Ր Ն Ե Ր Ը

Է Ջ Ե Ր Օ Ր Ա Գ Ր Է Ս

Գրեց՝ ՇԱՅԱ ԴԱՉԵՐԵԱՆ

Առաջնություն կանուխ կը կապեմ
բոլոր հարստութիւնս կազմող փոք-
րիկ անկողինս կարգիտ մը և քանի
մը ուրիշ կտորներ, և վար կըլինում
մէկ ամիսէ ի վեր ընկալաւս եղող
հայ կաթողիկէ երկու յիսուննոց աղ-
նիւ օրերըներու վերի սենեակէն
բակը, ուր անոնք ալ թաց աչքերով
կը հետեւէին իմ շարժումներուս ու-
րովհետեւ զիսկին թէ ո՛ր կերթամ:
Շատ յուզիչ էր մեր միաս բա-
րովի արարողութիւնը. միշտ լայով
կը խնդրէին ինչ որ վերջին անգամ
ըլլալով խմի գաւաթ մը կաթը որ
ափսէով բռնած էր մին. իսկ միւս-
սը կուզէր բարակ մի շրթայով խաչ
մը անցունել պարանոցս, որ պահէր
ու պահպանէր զիս շարիւր հար-
ուածներէն:
Իրենց այնքան բարի և ազնիւ
վերաբերումին զոհացում տալու հա-
մար, իսկոյն խաչը առնելով շապի-

կիս տակէն վիզս անցունելով խա-
չակնքեցի:
Այլ ազատած էի որովհետեւ զի-
մազիծներն փոխուած ու հանգիստ
երեւոյթ. մը ստացած էր. ի տես այս
փոփոխութեան իմ ալ ներքս նոր
յոյս մը արթնալ սկսաւ. ուստի ինձ
երկարած կաթը ևս կուլ տալով ու
ձեռքերն թօթուելով «խաթը քու-
մը արտասանել վերջ, դրան առջև
սպասող կառքին մէջ նստուեցայ,
մինչ ետեւէս կը պոռային շարունակ
«մախ սէլամի...»:
Երբ կառքը կայարան հասաւ բո-
լոր մերիները շոն էին նաև ծանօթ
ներ ու բարեկամներ եկած էին բարի
ճանապարհ մաղթելու:
Ամբողջս տխուր էինք և տակա-
ւին չէինք գիտեր թէ ո՛ր պիտի եր-
թայինք. դժբախտաբար կայարանի
պաշտօնեաները ևս բան մը չէին
խօսէր բացի սէնք գիտերէն:

Ոստիկաններ գալով մեզ վա-
կաններու մէջ տեղադրել սկսան.
ուստի ներկաներու վերջին միաս-
րոյնիս ըսելէ ու համարուելէ վերջ
երանք ու նստեցանք, միշտ վերջին
աղնարկներ փոխ անկելով հոն միա-
ցողներու հետ:
Ահա առաջին, երկրորդ ու եր-
րորդ ցանկը և կառաչարը շարժեցաւ
դէպ առաջ, ու մուս մը տարածե-
լով երկու կողմերնիս. միշտ մենք
ես կը նայէինք շարժելով մեր թաշ-
կինակները օդին մէջ, ներքէն ալ մեր
սրտերը կը շարժէր նոյնպէս. քանի
վայրաշարժ հեռացունէր մեզ Հա-
լէպէն:
Ամենքս տխուր նստած կը խոր
հէինք մեր անորոշ կացութեան վը-
րայ: Մեր մէջ կային երիտասարդ-
ներ զոնէ ընտանիքի հոգեբէն ազատ
միայն կը խորհէին ինքզինքնին. բայց
մենք այլազան հոգեբ. օրինակ ես կը
տածուէիմ որ ինչեք. օրինակ ես կը
խորհէի թէ ծեր մայրս երիտասարդ
կիսն և 3 փոքրիկ զաւակներս, արդ-
եօք ի՞նչ պէտք պիտի ծամբայ ինչն ու
հասնին Հալէպ և կամ այլուր: Վեր-
ջապէս խորհելով ոչ մի մեկնութիւն
կրնայի տալ, այս հոգեկան խաւար
մտածումներու շարքին. միւս կող-
մէ երթալով աւելի և աւելի կը հե-
ռանայինք իրարմէ. եթէ ողջ մնա-
լու ըլլայինք արդեօք ի՞նչ միջոցներով
(15)

LE DANUBE

SOCIÉTÉ ANON. D'ASSURANCES GÉNÉRALES

Fondée à Vienne en 1867

Տ Ա Ն Ի Ի Պ

Ը ն դ հ ա ն ու ր Ա պ ա հ ո վ ա գ ր ա կ ա ն

Ա մ ա ն ու մ Ը ն կ ե ր ու թ իւ մ

Հ Ի Մ Ն Ե Ա Ն Ի Վ Ի Ե Ն Ն Ա 1867-Ի Ն

ԴՐԱՄԱԳՆՈՒԹԻ ԵՒ ՊԱՀՆՍԻ ԴՐԱՄ	Ոսկի Զեք.	36,000,000
ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԳՆՈՒԹԻ	» »	218,000,000
ԻՐ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵՆԷՆ ԻՎԵՐՎԱԾՈՒՆԸ	» »	388,000,000

Տ ա մ ի ւ պ ի

Աւստրիական օր պաշտօնագրութեան, ամենամասնա-
ւոր պայմաններով կ'ապահովեն կեանքի եւ ար-
կածի պաշտօնագրութիւններ,
Ինչպէս նաեւ արկածի հետեւանով ամբողջական եւ մաս-
նակի նկարող վիճակի մէջ գնումըներուն եւ հիւան-
դութեան հետեւանով անկարող անձանց
պաշտօնագրութիւններ:

Օ Թ Է Լ Ա Լ Է Մ Պ Ի



ԱԼԷՄՊԻ ՓՈՂՈՑ
ԹԷԼԵՖՈՆ 622
Հեռագիր
HOTEL ALLENBY
ՄՕՏ ՕՐԷՆ, ՄՕՏ ՕՐԷՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԵՆ
ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ
Դիւրամացելի
Դիմեցող

Հայկական նոր օթել, անուանին չափ փառաւոր, անբաղձատեղիօրէն
մաքուր, շքեղ տեսարան, բոլոր սենեակները փողոցի վրայ,
հարմար օդ, անուանուած և օ. ԱՐԷԼՆԱՆ

Գ ո ը ծ ա ծ ե ց է ք

Երազեալան Երազեալ եւ Դապարտի Ընկերութեան Առողջապահական,
խնամքով պատրաստուած և զիւրազանի սկսածները, որոնք օժտուած են
անմրցելի առաւելութիւններով, Դամասկոսի միակ Հայկական Սրկարէթի
Դործարանը կատարելապէս գոհացում կուտայ ծառայութեան պահանջին:
Դիմեցէ՛ք, Դիմեցէ՛ք, Դիմեցէ՛ք,
ԵՐԱՂՈՒԹԵԱՆ ԵՐԱԶԵԱԼ ԵՒ ԴԱՊԱՐՏԻ ԸՆԿ.
Հասցէ, ՀԱՐՔ-ԷԼ-ՋԵՏՆ ԲԻԼ 2 Դամասկոս

Տօք. Յակոբ Վարդանեան

ՎԱՅՅԱԼ ԱՍԱՄԱՐՈՅԺ - ՎԻՐԱՐՈՅԺ

Իր քրինքը փոխադրած է Սալիէյ, Շուհետ
մզկիթի կեց ճիւղ թրամվայի գծին վրայ թիւ 171:
Ամէն օր կէսօրէ առաջ ժամը 8-էն մինչև 12 կը
դարձանէ. լինտերու, ատամանց և բերնի վերաբեր-
եալ ամէն տեսակ հիւանդութիւններ ամենավերջին
մեթոտներով երկտրական մեքենայով:
Կը պատրաստէ ոսկիէ և ոսկրէ աղաներ:
Զրանսակա՛ն և Ամերիկեան Ռիտոմ Պրիշներ:
Կէս օրէ վերջ ժամը 1-էն մինչև 6. Խնարայ
թիւ 270, Դամասկոս:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Պէյրուսէն Մանուէլ Պոյաճեան
կը փնտռէ իր եղբայրը Կալոս Պոյա-
ճեանը մօտ 30 տարեկան. հօրը ա-
նունը Յակոբ, մայրը՝ Դովանտա,
բնիկ ենինքն Գալացի: Ամուսնացած
Չազմագէտներու աղջկան հետ:
1920-ին կրիկեայէն մեկնած է Ե-
գիպտոս. ուր հասցէն էր Սուգ-էլ
Աթթերին Նօ 3: Դիտցունել Վերա-
նանի հասցէով: Դիտցունողին կա-
րելուր նուէր:
3-6

Ե Ր Թ Ե Ի Ե Կ

Ն Ա Ի Ա Յ Ի Ն

ՆԱԻԻՐ	ԿԸ ՀԱՄԱՆ	ԿԸ ՄԵԿԵՆ
Անկթօր.—	4 Օգոստոս	5 Օգոստոս
Համարթիւ.—	18 »	19 »
Սինաեա.—	20 »	21 »
Անկթօր.—	1 Սեպտեմբեր	2 Սեպտ.
Մարիթ փաշա.—	8 »	10 »
Համարթիւ.—	15 »	16 »
Փաթրիա.—	20 »	21 »
Շանթօլիս.—	22 »	24 »
Անկթօր.—	29 »	30 »

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ

	Կը հասնի	Կը մեկնի
Պէյրուս.—	7.07-13.15-22.09	7.08-13.16-22.11
Ջահէ.—	10.30-16.10- 2.58	10.33-16.13- 3.08
Բայազ.—	10.50-16.30- 3.28	11.15-16.42- 3.33
Դամասկոս.—	14.30-19.37- 7.	14.45-19.52- 7.13
Պալպէթ.—	11.49-15.26-	11.52-15.29
Հոմա.—	12.25-14.02	12.50-14.15
Համա.—	15.20-15.29	15.28-15.37
Թրիփօլի.—	17.25	8.50
Հալէպ.—	18.40 (19.01)	7.40

= 298 =

Թարեւոր որ այս վայրկեանս գաղտնի ոստիկան
Շանթօլիս անունը կը գտնուի. ուրիշ մէկը չէ եթէ
ոչ ժաք Պէլկարտը:
Գօլթ ընաղդարը մօտեցած էր իր խօսեցեալին,
որուն ետեւ ստիպու էին խոհեմաբար երկու գործա-
կալները:
Մինչ երիտասարդ լրագրողը, անկարող այլեւս
աւելի երկար ատեն զսպելու ինքզինքը, իր կեղ-
ծաւները հանելով կը գոչէր.
— Է՛հ լաւ, այո՛ ես եմ... Սակայն անմիջ եմ.
Մենարտիէ նշան ըրաւ իր երկու մարդոցը, որոնք
շրջապատեցին տեղեկաբերը:
Անոնցմէ մէկը կը պատրաստուէր ձեռնակապերը
անցնելու, բայց ժաք բողբոջեց.
— Շատ լաւ, յարեց Շանթօլիս:
Ու խօսքը Մենարտիէի ուղղելով, աւելցուց.
— Լաւ խաղացիք, սիրելի պաշտօնակիցս, բայց
կարծեմ կրնամ վստահեցնել ձեզ թէ ամենամեծ սը-
խալն է որ կը գործէք ձեր բովանդակ ասպարէզին
մէջ:
— Շուտով պիտի տեսնենք, գոհացաւ պատաս-
խանելով Մենարտիէ, ու ձեռքով նշան ըրաւ իր գոր-
ծակալներուն տանելու համար քանադակները:
— Ժա՛ք... գոչեց Գօլթ փղծկելով:
— Յետեւութիւն, պատասխանեց լրագրողը ըզ-
մայլելի վստահութեամբ մը:
Ու հեռացաւ ան, հետեւելով Մենարտիէի որուն
զէմքը կը ճառագայթէր ուրախութեամբ, ու իր քո-
վերէն ունենալով երկու գործակալները, որոնք բնաւ
աչք չէին հեռացնէր զինքը:
Մարի Ժա՛ն, որ իր խոհանոցին պատուհանէն
հետեւած էր բոլոր տեսարանին, բազումները երկինք

= 299 =

բարձրացնելով կը գոչէր.
— Ի՛նչ աղտոտ անասուն է սա անքան մար-
դուկը...
Իսկ Շանթօլիս, բազումներուն մէջ առնելով
իր դուստրը, որ կը հեծկտար սրտագին իր հայրական
բովանդակ գործովն ու վերջնական յաղթանակին
վրայ ունեցած իր կատարելալ վստահութեամբը առ-
ւելցուն շեշտով մը, ըսաւ անոր.
— Մի արտասուէր, սիրելիս, մեր ժաքը երկար
ատեն չի պիտի մնայ բանտին մէջ:
V
ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ժաք Պէլկարտի ձերբակալման լուրը կայծակի
արագութեամբ տարածուած էր բովանդակ Բարիդի
մէջ:
Շանթօլիս առաջին մասնագետները եղած էր
«Բիւրի Բարիդի» խմբագրատունը երթալ... խոր-
հելով թէ մի գուցէ երիտասարդ լրագրողին պատիւը
կրնար կասկածի դրուի իր տնօրէնին ու պաշտօնա-
կիցներուն կողմէ, որոնք սակայն միաձայն կերպով
փարատած էին իր կասկածները:
Արդարեւ, բոլորը, ամենափոքրէն սկսեալ մին-
չև ամենամեծը խիստ լաւ կերպով կը ճանչնային
ժաք Պէլկարտը, որով և չէին ուզեր հաւատալ թէ
ան կրնար գործած ըլլար այն բոլոր ոճիւրները, որոնք
կը վերագրուէին անոր, ու ընդհանուրին կարծիքը
կը թարգմանուէր ան բառերով զոր կ'արտաբերէր
խմբագրատան սպասաւորներէն՝ մին.
— Պ. Ժաքը ոստիկանութեան զիւրու խաղ մը
զաղալու վրայ է:

Սակարան - Պէյրուս

4 Օգոստոս 931

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՆԲԱՅԻ ՀԱՇՈՒԿ
(Մ Ի Կ Ն. Դ Ր Ա Մ)

Ձեկն	Գնում	Ծախում
Լոնտոն	Ա. Ո. 619.30	619.80
Պաղատին	Պ. Ո. 618.95	619.80
Եգիպտոս	Ե. Ո. 635.20	635.90
Նիւ-Յօրք	Տօլար 127.55	127.65
Իտալիա	Լիր	6.70
Ջուրիքիա	Չ. ֆր. 24.95	24.95
Պելճիք	Պէլկա 17.85	17.85
Հոլանտա	Ֆլ. 51.50	51.50
Բրազիլ	Դր. 2. 3.80	3.80
Մարտիա	Բէս 12.75	12.75
Սթամբուլ	Պամ. Ո. 60.75	60.75
Պերլին	Բ. 30.30	30.45

Դրամներ

Եգիպտ. Թուրք Ռուկի	634.50
Անգլիական »	618.50
Պաղատին »	618.50
Թրքական »	59.75
Ամերիկեան Տօլար	127.20
Իտալական Լիր (100)	665.—
Յունական Տօլար (100)	160.—
Պանք Օթթոման	150.—
Անգլիական Ռուկի Հնչ.	618.—
Օսմանեան »	553.—
Ֆրանսական »	480.—
Մէքսիկա Արծաթ	32.—